ԵՐԵՎԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 650971, 650961
Ֆաքս՝ (+37410) 653809
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 650971, 650961
Fax: (+37410) 653809
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 650971, 650961
Факс: (+37410) 653809
Эл.почта: norkmarashmc@gmail.com

«16» սեպտեմբեր 2024թ.
08-301/24

«Ագաստ» ՍՊԸ-ի տնօրեն Գ. Մուրադյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տ. Պետրոսյան 31/1
էլ. փոստ՝ agastllc@mail.ru,
հեռ. +374-91-54-51-95

Ծանուցում

(թիվ <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/26-10>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ագաստ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 09.02.2024 թվականին կնքվել է ապրանքի մատակարարման թիվ «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/26-10» պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Ընթացակարգի շրջանակներում, Հրավերի պայմանների, ինչպես նաև Ընկերության ներկայացրած առաջարկի համապատասխան, 14-րդ չափաբաժնով նախատեսված Կլոպիդոգրել անվանումով ապրանքի համար Պայմանագրում ներառվել են հետևյալ ապրանքային նշանները՝ Զիլտ, Կլոպացին 75մգ, Կլոպի-Դենկ 75, Պլավիքս:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2024թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

Պատվիրատուն 28.06.2024 թվականին, այնուհետև նաև 08.07.2024թ., 09.07.2024թ, 16.07.2024թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել է ապրանքների մատակարարման պատվերներ, որոնցում ներառված է նաև <<Զիլտ>> դեղամիջոցը: նշված դեղամիջոցը Ընկերության կողմից մինչև 16.09.2024 թվականը չի

մատակարարվել Պատվիրատուին, ուստի ընկերությունը էականորեն խախտել է պայմանագիրը, ողջամիտ ժամկետում չմատակարարելով ապրանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.1-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ ողջամիտ ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանք, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն որոշեց՝ միակողմանի ամբողջությամբ հրաժարվել 09.02.2024 թվականին կնքված «ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/26-10» ծածկագրով գնման պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ

կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը (1150001612200100 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆԻ Ա/Պ՝ Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ

Կատ.
Գնումների բաժին
Հեռ. 010-650560